«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ» ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ν ԵՄ-ՀԲՄԾՁԲ-26/09

Ք. Երևան

«16» 03 2026թ.

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ՝ Բ. Սեդրակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քլինլայն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Առաքելյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 329,988,000.00 (երեք հարյուր քսանինը միլիոն ինը հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև հանձման-ընդունման արձանագրությունների երկկողմ հաստատման տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում

տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է **5** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.2, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն որոշակի ծավալի մասով իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու

համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանիհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

Գլխավոր տնօրենի ժ/պ ____________ Բ. Մնդրակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քլինլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 11/5
«ԱյԴի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813025557300
ՀՎՀՀ 01847941

Տնօրեն՝ ____________ Ա. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
«16» 03 2026թ. կնքված
ԵՄ-ՀԲՄԾՁԲ-26/09 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Հ/հ | Ծառայություն | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Հատկանիշները (տեխնիկական բնութագիր) | Չափման միավորը | Ընդհանուր գինը/ՀՀ դրամ | Ընդհանուր քանակը | Մատուցման Հասցեն | Մատուցման Ժամկետը* |
| 1 | 90911110/501 | Մաքրության ծառայություն | Ծառայության նկարագիրը ներկայացված է կից Հավելված 1.1 և 1.2-ով:<br><br>Ծառայությունը մատուցելու ընթացքում կատարողի կողմից Պատվիրատուին պատճառած նյութական վնասը ամբողջությամբ պետք է փոխհատուցվի Կատարողի կողմից:<br><br>Ստորգետնյա հատվածներում աշխատանքը համարվում է առողջության համար վնասակար:<br><br>Նկարագրում առկա «Ըստ անհրաժեշտության» բառակապակցության առկայության դեպքում լրացուցիչ քանակը կարող է տատանվել ոչ ավել քան 10 անգամ: | դրամ | 130,526,075.34<br><br>199,461,924.66 | 1 | ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 78 և/կամ ՀՀ, ք. Երևան, Արարատյան 87՝ ըստ Պատվիրատուի պահանջի | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օր հետո՝ մինչև 30.12.2026թ.՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները<br><br>Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև պայմանագրին ուժի մեջ մտնելուց 2 տարի ժամկետով՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

Գլխավոր տնօրենի ժ/պ __________ Բ. Սեդրակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քլինլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 11/5
«ԱյԴի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813025557300
ՀՎՀՀ 01847941

Տնօրեն՝ __________ Ա. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«16» 03 2026թ. կնքված
ԵՄ-ՀԲՄԾՁԲ-26/09 ծածկագրով պայմանագրի

# ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

- ✓ Կատարողը պետք է մաքրման ծառայությունները վարչական շենքերում մատուցի յուրաքանչյուր աշխատանքային օր՝ մինչև առավոտյան ժամը 09:00, այդ ժամին տարածքը պետք է լինի պատշաճ կերպով մաքրված վիճակում: Կատարողը ծառայությունները մատուցելիս չպետք է խոչընդոտի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի բնականոն աշխատանքային գործունեությանը և պետք է պահպանի «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ներքին կարգապահական կանոնները: Առանձին դեպքերում աշխատանքային գրաֆիկը սահմանվում է Պատվիրատուի կողմից նախապես համաձայնեցնելով Կատարողի հետ:

- ✓ Կատարողն աշխատանքային օրերին պետք է վարչական և կապի շենքում ապահովի առնվազն երկու հերթապահություն (հերթապահների թիվը և նրանց կողմից մատուցվող ծառայության տեսակը համաձայնեցնել Պատվիրատուի հետ)՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով՝ 09:00-18:00 ժամանակահատվածում, ընդ որում կապի շենքում հերթապահությունը պետք է իրականացվի նաև շաբաթվա բոլոր օրերին 09:00-18:00 ընկած ժամանակահատվածում օրական երկու անգամ հաճախականությամբ, ինչպես նաև պետք է ապահովի առնվազն մեկ կոնտակտային անձի առկայություն, որը հասանելի կլինի յուրաքանչյուր օրացույցային օր՝ 24 ժամյա: Բացի պլանային մաքրման ծառայության իրականացումից, Կատարողը պարտավոր է Պատվիրատուի առաջին իսկ կանչով՝ առավելագույնը 10 րոպեի ընթացքում ապահովել իր հերթապահ աշխատակցի ներկայությունը Պատվիրատուի կողմից մատնանշված վայրում և այնտեղ մատուցել այդ պահին պահանջվող ծառայությունները:

- ✓ Վարչական շենքերում փափուկ կահույքի (բազմոց 18 հատ, բազկաթոռ 30 հատ, աթոռ 650 հատ և կաշվե աթոռ 60 հատ) քիմ. մաքրում՝ հատուկ տեխնիկայի միջոցով՝ պետք է իրականացվի տարեկան 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության 3 անգամ:

- ✓ Վարչական շենքի սանհանգույցի յուրաքանչյուր խցիկում Կատարողը պետք է ապահովի մշտական, առնվազն երկշերտ զուգարանի թղթի, իսկ յուրաքանչյուր լվացարանի մոտ համապատասխան տարայով(ում)՝ հեղուկ օճառի առկայություն, իսկ 6-րդ, 7-րդ և 8-րդ հարկերում (8-10 սանհանգույց) նաև պետք է ապահովի ձեռքի թղթե սրբիչ՝ համապատասխան դիսպենսերներով: Նշված հասցեում աշխատակիցների քանակը կազմում է 150 անձ, իսկ սանհանգույցների քանակը կազմում է 27-30 հատ:

- ✓ Կապի տան սանհանգույցի յուրաքանչյուր խցիկում կատարողը պետք է ապահովի մշտական, առնվազն երկշերտ զուգարանի թղթի, իսկ յուրաքանչյուր լվացարանի մոտ համապատասխան տարայով(ում)՝ հեղուկ օճառի առկայություն: Նշված հասցեում աշխատակիցների քանակը կազմում է 70 անձ, իսկ սանհանգույցների քանակը կազմում է 6 հատ:

- ✓ Վարչական շենքերում հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամսական մեկ անգամ՝ շաբաթ և կիրակի օրերին՝ անհրաժեշտության դեպքում հավելյալ աշխատակիցների ներգրավմամբ:

- ✓ Վարչական շենքերում 170սմ-ից բարձր մակերևույթների փոշեզերծում ամսական 2 անգամ:

- ✓ Տարին 4 անգամ վարչական շենքի բոլոր տեսակի ճակատային ապակիների լվացում՝ հատուկ տեխնիկայի, ալպինիստական ծառայության կամ համապատասխան այլ միջոցներով (900քմ.):

- ✓ Բոլոր կայարաններում իրականացվում են շուրջօրյա հերթապահություն՝ 4 հերթափոխով, հիմնական մաքրման աշխատանքները նախատեսելով գիշերային ժամերին՝ 00:00-06:00 ընկած ժամանակահատվածում, ընդ որում մաքրման աշխատանքներն իրենց մեջ ներառում են մինչև 2մ բարձրության հասանելի հատվածները:

- ✓ Բոլոր կայարաններում հիմնարար մաքրման աշխատանքները պետք է իրականացվեն ամիսը մեկ անգամ՝ գիշերային ժամերին՝ սկսած 00:00-ից մինչև 06:00-ն, ընդ որում մաքրման աշխատանքներն իրենց մեջ ներառում են մինչև 3մ բարձրության հասանելի հատվածները, ինչպես նաև ըստ անհրաժեշտության 1 անգամ:

✓ Կայարաններում տարբեր տեսակի հատակների (մարմար, գրանիտ, բազալտ, մանրահատակ, պրես-կերամո գրանիտ) մաքրման, լվացման և փայլեցման համար Կատարողը պարտավոր է տրամադրել հատակ լվացող համապատասխան մեքենաներ՝ 3-ից ոչ պակաս:

✓ Ձմռան ամիսներին ընկերության վարչական շենքերի, ինչպես նաև բոլոր կայարանների հարակից տարածքների, աստիճանների մաքրում և հեռացում ձյունից և սառույցից՝ անհրաժեշտության դեպքում հատուկ տեխնիկայի կիրառմամբ:

✓ Կատարողը պետք է իր աշխատակիցներին ապահովի Կատարողի տարբերանշանով համազգեստով:

✓ Մաքրման ծառայությունների ընթացքում օգտագործվող լվացող-մաքրող նյութերը, մաքրող և փայլեցնող կտորները, աղբի տոպրակները, օդի թարմացուցիչները, և մաքրության համար անհրաժեշտ բոլոր նյութերը, սարքերը և սարքավորումներն տրամադրվում են Կատարողի կողմից:

✓ Կատարողը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում՝ ըստ մաքրման ծառայությունների մատուցման ժամանակացույցի, վերացնել թերությունները պատվիրատուի պահանջով (ամենօրյա մաքրման ծառայությունները՝ մինչև տվյալ աշխատանքային օրվա ավարտը, շաբաթականը՝ մինչև շաբաթվա ավարտը, ամսականը՝ հաջորդող ամսվա 3-ը ներառյալ):

✓ Կատարողը պարտավոր է յուրաքանչյուր ամսվա համար նախապես ներկայացնի պատվիրատուին, ոչ ամենօրյա կատարվող աշխատանքների պլանային գրաֆիկ:

✓ Հիմնարար մաքրման աշխատանքներ են համարվում վարչական շենքերում՝ սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում և մաքրում, կեղտաբծերի հեռացում, լուսավորման սարքավորումների լվացում և փայլեցում, բացվող պատուհանների երկկողմանի լվացում և չորացնում, չբացվող պատուհանների միակողմանի լվացում և չորացնում (հիմնարար աշխատանքները պետք է իրականացվեն համապատասխան մակերևույթների համար նախատեսված նյութերի միջոցով):

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

Գլխավոր տնօրենի ժ/պ __________ Բ. Սեդրակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քլինլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 11/5
«ԱյԴի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813025557300
ՀՎՀՀ 01847941

Տնօրեն՝ __________ Ա. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.2
«16» 03 2026թ. կնքված
ԵՄ-ՀԲՄԾՁԲ-26/09 ծածկագրով պայմանագրի

# ՄԱՔՐՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

| № | Մաքրվող տարածքներ | Մաքրման հաճախականությունը | Չ/Մ | Քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | Կայարանների նախամուտքի և նրան հարակից՝ աստիճանավանդակների մաքրվող մակերեսների ավլում, թաց լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, | Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աս 7 անգամ | մ² | 3944.4 |
| 2 | «Մ» տիպի դռներ՝ մաքրում կեղտաբծերի հեռացում, ապակյա հատվածների փայլեցում | Օրը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աս 2 անգամ | մ² | 583 |
| 3 | Ճաղաշարի մաքրում | Շաբաթը 1 անգամ | մ² | 56 |
| 4 | Նախասրահի պատերի խոնավ մաքրում, կեղտաբծերի, հետքերի հեռացում համապատասխան մակերևույթի համար նախատեսված հեղուկի միջոցով | Օրը 1 անգամ | մ² | 604.9 |
| 5 | Նախասրահի հատակի ավլում, լվացում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, | Օրը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աս 7 անգամ | մ² | 3033.5 |
| 6 | Կայարանների ծառայողական սենյակների՝ սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում: | Օրը 1 անգամ | մ² | 3011.7 |
| 7 | Շարժասանդուղքների մաքրում և փայլեցում: Սույն մասով աշխատակազմը պետք է լինի վերապատրաստված և տիրապետի տեխնիկական և անվտանգության կանոններին: | Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աս 7 անգամ | մ² | 3052.7 |
| 8 | Ստորգետնյա կառամատույցների ավլում, լվացում և փայլեցում հատուկ մակերևույթի համար նախատեսված մաքրող հեղուկների և համապատասխան լվացող և փայլեցնող միջոցներով: | Օրը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աս 7 անգամ | մ² | 10465.17 |
| 9 | Վերգետնյա կառամատույցների ավլում, լվացում և փայլեցում հատուկ մակերևույթի համար նախատեսված մաքրող հեղուկների և համապատասխան լվացող և փայլեցնող միջոցներով: | Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աս 7 անգամ | մ² | 2557 |
| 10 | Կառամատույցների լվացում և փայլեցում՝ մարտկոցներով աշխատող փայլեցնող մեքենաների միջոցով, հատուկ մակերևույթի համար նախատեսված մաքրող հեղուկների օգնությամբ: | Շաբաթը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աս 2 անգամ | մ² | 13022.17 |
| 11 | Կառամատույցի մարմարե պատերի և զարդաքանդակների լվացում և փայլեցում՝ հատուկ հեղուկների միջոցով, օգտագործելով համապատասխան տեխնիկական միջոցներ՝ պատերի և զարդաքանդակների անվնաս մաքրման համար՝ այդ թվում ջրի բարձր ճնշմամ սարք, և փայլեցնող մեքենա: | Ամիսը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության աս 1 անգամ | մ² | 2867.1 |
| 12 | Կայարաններում սյուների լվացում և փայլեցում, կեղտաբծերի հեռացում՝ բարձրակարգ հեղուկների միջոցով, որը առաջացնում է հատուկ պաշտպանիչ շերտ | Ամիսը 2 անգամ | մ² | 1703.8 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մակերևույթի համար, օգտագործելով համապատասխան մաքրող և փայլեցնող մեքենա: | | | |
| 13 | Կայարանային փիտրաժների լվացում | 3 ամիսը մեկ անգամ | մ² | 1249 |
| 14 | Վարչական շենքի նախասրահի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակների, զուգարանների, աշխատասենյակների, սեղանների և աթոռների ( հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 4353 |
| 15 | Կապի շենքի նախասրահի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակի, զուգարանների, աշխատասենյակների, սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 2180 |
| 16 | Էլ. հավաքակայանի վարչական շենքի նախասրահի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակի, զուգարանների, աշխատասենյակների, սեղանների և աթոռների (հատուկ ուշադրություն դարձնելով խաչուկներին) մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում և փայլեցում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում,, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում: | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 2186 |
| 17 | Էլ. հավաքակայանի վարչական շենքի չբացվող պատուհանների լվացում՝ ավտոաշտարակի կամ համապատասխան այլ միջոցներով | 3 ամիսը մեկ անգամ | մ² | 282.7 |
| 18 | Էլ. հավաքակայանի վարչական շենքի հարակից տարածքի ավլում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 935 |
| 19 | 2 և 3 վագոններից բաղկացած շարժակազմի լվացման կետից դուրս եկած վագոնների ապակիների չորացում դրսի կողմից: | Օրը 1 գնացք | մ² | 60-90 |
| 20 | 2 և 3 վագոններից բաղկացած շարժակազմի ներսի մաքրվող մակերեսների հիմնարար մաքրում և ախտահանում հատուկ նյութերով: | Օրը 1 գնացք | մ² | 775.5 |
| 21 | Օրվա ընթացքում ընթացիկ սպասարկման և կանգառման ժամանած գնացքների վագոնների ներքին մաքրում՝ հատակի թաց լվացում և փայլեցում, կտորե և կաշվե նստարանների մաքրում՝ լաքաների հեռացում, լուսավորող սարքերի մաքրում, դռների, բռնակների և ապակիների մաքրում: | Օրը 22 գնացք՝ բաղկացած 2-3 վագոններից, ինչպես նաև ըստ անհրաժեշտության (08:00-00:30 ընկած ժամանակահատվածում) | մ² | 11374 |
| 22 | Վագոնների կտորե և կաշվե նստարանների քիմ. Մաքրում՝ հատուկ տեխնիկայի և նյութերի միջոցով | Շաբաթը 1 անգամ | մ² | 702 |
| 23 | Էլ. Հավաքակայանի մոտոդեպոյի, վերամբարձ վերանորոգման արտադրամասի, միջանցիկ հատվածների, աստիճանավանդակի, աշխատա-սենյակների, սեղանների և աթոռների մաքրում, պահարանների, տեխնիկա-կան միջոցների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի ավլում, լվացում և փայլեցում, կեղտաբծերի հեռացում: | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 4340 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 24 | Էլ. հավաքակայանի կանգառավերանորոգման արտադրամասի, աշխատասենյակների, սեղանների և աթոռների մաքրում, պահարանների, տեխնիկական միջոցների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, հատակի ավլում, լվացում և փայլեցում, պատերի մաքրում, կեղտաբծերի հեռացում: | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 5104.2 |
| 25 | Էլ. հավաքակայանում գտնվող մեքենավարների ուսումնական կենտրոնի մաքրում, լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում: | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 74.4 |
| 26 | Վարչական շենքի և կապի շենքի հարակից տարածքների ավլում, լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, ձմռան ամիսներին ձյան մաքրում և հեռացում | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 960 |
| 27 | Սանհանգույցներ (նստատեղերի, լվացարանների, զուգարանակոնքերի հարող մակերեսի մաքրում և ախտահանում) | Օրը 3 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 3 անգամ | հատ | 65 |
| 28 | Հայելիների մաքրում, փայլեցում | Օրը 2 անգամ | մ² | 17.3 |
| 29 | Ենթակայանների հատակի ավլում և խոնավ մաքրում, սեղանների և աթոռների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 4062.2 |
| 30 | Կապ մասնաճյուղի սարքավորումների և սպասարկող անձնակազմի տարածքների հատակի ավլում և խոնավ մաքրում, սեղանների և աթոռների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում, | Ամսվա ընթացքում 2անգամ | մ² | 1257.2 |
| 31 | Շարժասանդուղքների մեքենայական սրահների հատակի ավլում և խոնավ մաքրում, սեղանների և աթոռների մաքրում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում,ծառայողական սենյակներ , նախասրահներ,աստիճաններ | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 2676.9 |
| 32 | Սասունցի Դավիթ կայարանի ետնամասում գտնվող մեքենավարների հերթափոխային տարածքի մաքրում և լվացում, աղբի հեռացում և տոպրակների տեղադրում: | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 50 |
| 33 | «Հանրապետության հրապարակ» կայարանի վերգետնյա հատվածի սիզամարգերի (գազոնների) հնձում և ձևավորում | Ամիսը 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 1712 |
| 34 | «Հանրապետության հրապարակ» կայարանի մուտքի հարևանությամբ գտնվող շատրվանների և վերգետնյա հատվածի սիզամարգերի (գազոնների), սալիկապատված հատակների և աստիճանների ավլում, աղբի մաքրում և հեռացում, աղբի տոպրակների տեղադրում | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 2 անգամ | մ² | 4887,3 |
| 35 | Մոտոդեպոյում գտնվող զուգարանի (նստատեղերի, լվացարանների, զուգարանակոնքերի հարող մակերեսի մաքրում և ախտահանում), լոգասենյակների, չորացման կետի (сушилка) և կաթսայատան մաքրում, հատակի լվացում և փայլեցում, պատերի վերանայում, կեղտաբծերի հեռացում | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | մ² | 88 |
| 36 | Վարչական շենքում և կայարաններում տեղադրված անցաարգելների մաքրում և փայլեցում, | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | հատ | 53 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 37 | Կայարաններում տեղադրված վճարային տերմինալների և վալիդատորների մաքրում և փայլեցում | Օրը 1 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության ևս 1 անգամ | հատ | 20 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

Գլխավոր տնօրենի ժ/պ ____________ Բ. Սեդրակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քլինլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 11/5
«ԱյԴի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813025557300
ՀՎՀՀ 01847941

Տնօրեն՝ ____________ Ա. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«16» ___03___ 2026թ. կնքված
ԵՄ-ՀԲՍԾՁԲ-26/09 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Պայմանագիրը որոշակի մասով կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և վճարման ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսվելու են «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի հրապարակած փոփոխված և լրացված գնման պլանի համապատասխան անվանատողերով:

Վճարումը կիրականացվի ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վճարման ենթակա գումարները ներկայացվելու են աճողական կարգով:

ՀՀ դրամ

| Հ/Հ | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման | Ծառայության անվանումը | Չ/մ | Ընդհանուր քանակը | Վճարումները նախատեսվում է իրականացնել 2026-2028թթ.՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | 2026թ. | | | | | | | | | | | | 2027-2028թթ. | Ընդհանուր գինը |
| | | | | | I | II | III | IV | V | VI | VII | VIII | IX | X | XI | XII | I-XII | |
| 1 | 90911110/501 | Մաքրության ծառայություն | դրամ | 1 | - | - | 6,780,575.34 | 20,530,075.34 | 34,279,575.34 | 48,029,075.34 | 61,778,575.34 | 75,528,075.34 | 89,277,575.34 | 103,027,075.34 | 116,776,575.34 | 130,526,075.34 | ...% | 130,526,075.34 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570083324940100
ՀՎՀՀ 00000911

Գլխավոր տնօրենի ժ/պ՝ __________ Բ. Սեդրակյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

«Քլինլայն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Պարոնյան 11/5
«ԱյԴի բանկ» ՓԲԸ
Հ/Հ 11813025557300
ՀՎՀՀ 01847941

Տնօրեն՝ __________ Ա. Առաքելյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«____» __________________ 2026թ. կնքված
ԵՄ-ՀԲՄԾՁԲ-26/09 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ___________________________
հվհհ_________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«____» __________________ 2026թ. կնքված*
*ԵՄ-ՀԲՄԾՁԲ-26/09 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ______________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________________
ազգանուն, անուն
______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն
______________________________
ստորագրություն

*Հավելված N 4*
*«____» _________________ 2026թ. կնքված*
*ԵՄ-ՀԲՄԾՁԲ-26/09 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

__________ ֆինանսական գործակալի անվանումը ____________ հայտնում է, որ.

1. ____ պատվիրատուի անվանումը ___-ի և _________ կատարողի անվանումը ______-ի միջև «----» ____________ 20 թ. Կնքված «---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և _____ կատարողի անվանումը ______-ի միջև «----» ____________ 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________

_______________

ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անունն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.